ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Այսօր շուկայում առկա է բանկային մասնագետների մեծ պահանջարկ: ՀՀ ֆինանսական և ապահովագրական գործունեության ոլորտում 14700 աշխատակցից 12500-ն աշխատում է բանկային համակարգում:Ծրագրում ներառված ուսանողների գերակշիռ մասն արդեն առաջին կուրսում սկսում է աշխատել մասնագիտական ոլորտում(մոտ 80%-ը):

Ծրագրի տևողությունը

1.5 տարի

Դասապրոցեսը

շաբաթական 3 անգամ
երկուսը՝ ժամը 18:20-ից,
մեկը՝ շաբաթ օրն առավոտյան

Ուսման վճարը (տարեկան)

700.000 ՀՀ դրամ

Որակավորում

տնտեսագիտության մագիստրոս

Բանկային համակարգում միջին աշխատավարձը կազմում է 530000 **ՀՀ դրամ**:

ԱՌԱՐԿԱՅԱՑԱՆԿ

Առարկայացանկը մշակվել է ՀՀ հեղինակավոր առևտրային բանկերի հետ համատեղ՝ հաշվի առնելով միջազգային առաջատար բուհերի փորձը:

առաջին կիսամյակ

Մոդուլ 1
1. ՀՀ բանկային օրենսդրություն
2. Բանկային մենեջմենթ

Մոդուլ 2
1. Վիճակագրությունը բիզնեսում
2. Կառավարչական և ֆինանսական հաշվառումն առևտրային բանկերում

Մոդուլ 3
1. Վճարահաշվարկային և գանձապետական գործառնություններ
2. Ֆինանսական ռիսկերի կառավարում

Մոդուլ 4
1. Մանրածախ բիզնեսի առանձնահատկությունները առևտրային բանկերում
2. Բանկային պրոդուկտների վաճառքի հմտություններ

երկրորդ կիսամյակ

Մոդուլ 5
1. Փողերի լվացում և գործառնական ռիսկեր
2. Բանկային վերահսկողություն

Մոդուլ 6
1. ՓՄՁ և կորպորատիվ բիզնեսի կառավարման առանձնահատկությունները առևտրային բանկերում
2. Առևտրային բանկերի ռազմավարության մշակումը անընդհատ փոփոխվող միջավայրում

Մոդուլ 7
1. Առևտրային բանկերի բիզնես գործընթացների կառավարում
2. Վճարման էլեկտրոնային համակարգեր

Մոդուլ 8
1. Բանկային մարքեթինգ
2. Առևտրային բանկերի գործունեության վերլուծություն և գնահատում

երրորդ կիսամյակ

Մոդուլ 9
1. Ֆինանսական տեխնոլոգիաները բանկային համակարգում (FinTech)
2. Թվային բանկ (Digital banking)

Մոդուլ 10 – ընտրովի առարկաներ
- Կազմակերպությունների ֆինանսական վերլուծություն
- Ներքին հսկողությունը և աուդիտը առևտրային բանկերում
- Տեղեկատվական համակարգերի կիրառումը բանկային համակարգում

Մոդուլ 11 – Գիտահետազոտական փորձառություն (տևողությունը՝ 10 շաբաթ)

ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ

Աշոտ Մարդոյան

Կրթական ծրագրի ղեկավար

LinkedIn հարթակում անձնական էջի **հղումը**

ՀՊՏՀ բանկային գործի և ապահովագրության ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ:

Արթուր Նահապետյան

LinkedIn հարթակում անձնական էջի **հղումը**

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ, բիզնեսի զարգացման գծով տնօրեն, տնօրինության անդամ: Աշխատանքային գործունեությունը սկսել է 2003-ից՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ից, Ռազմավարության և մեթոդոլոգիայի վարչությունում՝ որպես մասնագետ: Այնուհետև,նույն վարչությունում նշանակվել է գլխավոր մասնագետ, ապա՝ առաջատար մասնագետ: 17.10.2009-ից «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Անձնակազմի կառավարման բաժնում ընդունվել է որպես դասընթացավար, այնուհետև նույն վարչությունում՝ որպես կարիերայի զարգացման պատասխանատու: 2017թվականից զբաղեցնում է Բիզնեսի զարգացման գծով տնօրեն-Տնօրինության անդամի պաշտոնը:

Արմեն Հակոբյան

LinkedIn հարթակում անձնական էջի **հղումը**

«Ակբա Բանկ» ԲԲԸ-ի գլխավոր հաշվապահ: Մասնակցել է որակավորման բարձրացման տարբեր դասընթացների ՀՀ-ում, Լիբանանում, Նիդեռլանդներում, Չեխիայում, Ֆրանսիայում և Մեծ Բրիտանիայում: 2006-2007թթ.՝ «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի գլխավոր հաշվապահի ժամանակավոր պաշտոնակատարը, 2007-2015թթ.՝ գլխավոր հաշվապահի տեղակալ: 2014-2016թթ. համատեղությամբ աշխատել է «ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ-ում՝ զբաղեցնելով գլխավոր հաշվապահի պաշտոնը:

Արամ Մխիթարյան

LinkedIn հարթակում անձնական էջի **հղումը**

2012 թվականից մինչ օրս՝ «Ագրոլիզինգ լիզինգային վարկային կազմակերպություն» ՍՊԸ գործադիր տնօրեն, խորհրդի նախագահ: 2006-2012 թթ.՝ մարքեթինգի և լիզինգի գծով ղեկավար «Ագրոլիզինգ լիզինգային վարկային կազմակերպություն»-ում: 2010 թվականից մինչ օրս՝ ՀՊՏՀ բանկային գործի և ապահովագրության ամբիոնի դոցենտ:

ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ

Հարություն Իսպիրյան

LinkedIn հարթակում անձնական էջի **հղումը**

«Արդշինբանկ» ՓԲԸ-ի վարչության անդամ, գործառնական տնօրեն: Ունի բանկային համակարգում աշխատելու ավելի քան **10** տարվա փորձ: «Արդշինբանկ» ՓԲԸ-ի գործառնական տնօրենի պաշտոնը զբաղեցնում է **2015** թվականի հոկտեմբերից: Մինչ այդ աշխատել է «Արդշինբանկ» ՓԲԸ-ում՝ որպես ներքին աուդիտի ղեկավար: **2005-2009**թթ. աշխատել է «Արդշինբանկ» ՓԲԸ ակտիվների և պասիվների կառավարման վարչությունում, իսկ **2009** թվականից Ներքին աուդիտի ստորաբաժանումում՝որպես ներքին աուդիտի անդամ, ղեկավարի տեղակալ, ղեկավար:

Շավարշ Ոսկանյան

LinkedIn հարթակում անձնական էջի **հղումը**

2018 թվականից «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի SS ծառայությունների ղեկավար: 2005 - 2008 թթ.՝ «Կասկադ Կապիտալ Հոլդինգս» ՓԲԸ-ի SS մենեջեր, 2007 – 2010 թթ.՝ նույն ընկերության տեղեկատվական տեխնոլոգիաների և պլաստիկ քարտերի բաժնի պետ: 2010 – 2018 թթ.՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ, Տեղեկատվական անվտանգության բաժնի գլխավոր մասնագետ:

Վարդգես Ղահրամանյան

LinkedIn հարթակում անձնական էջի **հղումը**

«Արդշինբանկ» ՓԲԸ ֆինանսական ռիսկերի վարչության պետ, բանկի ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտեի անդամ: 09.2008 – 09.2011՝ «ՎՏԲ Բանկ Հայաստան» ՓԲԸ Բիզնեսի պլանավորման բաժնի գլխավոր մասնագետ, 09.2011 – 06.2014՝ Ֆինանսական կառավարման ստորաբաժանման ղեկավարի պաշտոնակատար, ֆինանսական վերլուծությունների բաժնի ղեկավար: Որպես փորձառու մասնագետ ներգրավված է եղել մի շարք նախագծերում, այդ թվում՝ Բանկի եվրոպարտատոմսերի թողարկում, ներդրումային հիմնադրամի և վարկային ընկերության ստեղծում:

ԳՈՐԾԸՆԿԵՐ-
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

AMERIABANK

IDBank

CENTRAL BANK OF ARMENIA

INECOBANK

AraratBank

ABB ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ

acba

AgroCredit CARD

Ardshinbank

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Շրջանավարտները , համապատասխան վերջնարդյունքներ ստանալով, որպես ղեկավար կազմ, կարող են աշխատանքի անցնել հետևյալ կազմակերպություններում՝ միջազգային ֆինանսավարկային կառույցներ (Համաշխարհային բանկ, Արժույթի միջազգային հիմնադրամ, Ասիական զարգացման բանկ, Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկ և այլն), Կենտրոնական բանկ, առևտրային բանկեր, վարկային կազմակերպություններ, այլ ֆինանսավարկային ինստիտուտներ:

Ողջույն, **ես Էմման եմ:** Գերազանցությամբ ավարտել եմ ՀՊՏՀ ֆինանսական ֆակուլտետի առկա բակալավրիատը, այնուհետև նույն ֆակուլտետի մագիստրատուրան՝ «Բանկային գործունեության կազմակերպում» մասնագիտացմամբ: Մագիստրատուրայում սովորելու 1,5 տարիների ընթացքում ստացել եմ հիմնարար գիտելիք՝ ամրապնդելով և զարգացնելով նախկինում ուսումնասիրած ոլորտները: Մագիստրատուրայի ուսուցումը հիմնվել է ֆինանսական, մասնավորապես՝բանկային համակարգում նորագույն տեխնոլոգիաներով պայմանավորված և թվային աշխարհի զարգացումների արդյունքում առաջացած փոփոխությունների ուսումնասիրության վրա: Վերջինս էլ օգնել է ավելի տեղեկացված լինել նորարարություններին, ավելի մրցունակ՝ աշխատաշուկայում և սիրել աշխատանքը: Ստացված վերջնարդյունքների շնորհիվ այսօր ես աշխատում եմ **Կենտրոնական բանկում**:

Ողջույն, **ես Սամվելն եմ:** 2021 թվականին ավարտել եմ ՀՊՏՀ «Բանկային գործունեության կազմակերպում» կրթական ծրագիրը: Այժմ աշխատում եմ **«Ակբա բանկ» ԲԲԸ-ում՝որպես մասնաճյուղի կառավարիչ**: Ուսումնառության ընթացքում ստացած գիտելիքներն ընդլայնեցին մտահորիզոնս, օգնեցին տիրապետել ավելի մրցունակ գիտելիքների և հմտությունների, որի արդյունքում դարձա առավել պահանջված մասնագետ:

Ողջույն, **ես Արթուրն եմ:** Ավարտել եմ ՀՊՏՀ ֆինանսական ֆակուլտետի «Բանկային գործունեության կազմակերպում» մասնագիտացման մագիստրատուրան: Այժմ աշխատում եմ Հայաստանյան առաջատար բանկերից հանդիսացող **«Արդշինբանկ» ՓԲԸ-ում՝որպես կորպորատիվ բիզնեսի վերլուծաբան:** Ուսումնառության ընթացքում ստացել եմ նոր գործնական գիտելիք, որը ներդնում եմ իմ աշխատանքային գործունեության մեջ:

Ողջույն, **ես Գոհարն եմ:** Ավարտել եմ ՀՊՏՀ ֆինանսական ֆակուլտետի «Բանկային գործունեության կազմակերպում» մասնագիտացմամբ առկա մագիստրատուրան: Ուսումնառության ընթացքում բակալավրիատի տեսական գիտելիքներս էլ ավելի եմ խորացրել, ինչպես նաև ձեռք եմ բերել մեծ փորձ, ինչն էլ այսօր կիրառում եմ **Կենտրոնական բանկում**: Կրթական ծրագրի կարևորագույն առավելություններից եմ համարում այն, որ դասավանդողները բանկային համակարգի արհեստավարժ մասնագետներն են, որոնք ջանք ու եռանդ չեն խնայում իրենց հմտությունները փոխանցելու գործում: